բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծասերին, Դատարանն արձանագրում է, որ հայցն ամբողջությամբ բավարարվելով պայմանավորված դատական ծախսի գումարը ենթակա է հատուցման Պատասխանողի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

ՎՃՌԵՑ

1. «Եվրոստրոյ» ՍՊ ընկերության հայցը բավարարել: Անվավեր ճանաչել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Անտոնյանի «Եվրոստրոյ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 26.07.2024թ.-ի որոշումը:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Եվրոստրոյ» ՍՊ ընկերության որպես դատական ծախս բռնագանձել՝ 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am